ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«03» նոյեմբերի 2014թ.

# ՀՐԱՄԱՆ
№ 279

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ քաղաքաշինության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1294-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 14-րդ կետի 4-րդ ենթակետը,

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Տեղեկատվության ազատության ոլորտում ՀՀ քաղաքաշինության նախարարության գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, հասանելիության ապահովման և տեղեկություններ փնտրող անձանց օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում հավաստի ու ամբողջական տեղեկություն տրամադրելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Հասմիկ Պետրոսյանին նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՆԱԽԱՐԱՐ՝** **Ն. ՍԱՐԳՍՅԱՆ**

Իսկականի հետ ճիշտ է:

«03» XI 2014թ.